« Հաստատված է »
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 07.07. 2017թ.
թիվ 6 նիստում:

Գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

«____» _____ 2017թ.

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1) Սույն հայեցակարգը սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ Կրթահամալիր) կրթական գործունեության որակի բնագավառում համաեվրոպական և ՀՀ-ում որդեգրված կրթության զարգացման և որակի ապահովման քաղաքականությունը: Այն սահմանում է Կրթահամալիրում մասնագիտական կրթության որակի ապահովման, մշտադիտարկման շրջանակի ընդհանուր պահանջները և սկզբունքները, ինչպես նաև՝ վերջինիս կազմակերպական համակարգը:

2) Սույն հայեցակարգը Կրթահամալիրի կրթական գործունեության իրավական ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է: Այն Կրթահամալիրում որակի ներքին քաղաքականության հետ միասին հանդիսանում է մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնարար փաստաթուղթ:

2. Հայեցակարգի նորմատիվ հիմքերը

1) ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին>> թիվ 332-Ն որոշումը,

2) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի <<Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին>> թիվ 959-Ն որոշումը,

3) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի թիվ 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 978-Ն որոշումը,

4) Կրթահամալիրի կանոնադրությունը,

5) Կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրերը,

6) Կրթահամալիրի գիտական խորհրդի այլ որոշումները,

7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ նորմատիվ իրավական ակտերը:

3. Կրթահամալիրում մասնագիտական կրթության որակի ապահովման քաղաքականության սկզբունքները

1) Ընդգրկվածությունը: Կրթահամալիրը կարևորում է շահառուների, այդ թվում՝ ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում, որակի ապահովման հանձնաժողովներում և գործընթացի մշտադիտարկմանը:

2) Հաշվետվողականությունը և թափանցիկությունը: Կրթահամալիրը, հնարավորության սահմաններում, կապահովի շահառուներին տրամադրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը: Կրթահամալիրի պաշտոնական կայքը պարբերաբար կթարմացվի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությամբ: Կրթահամալիրի ուսումնական գործընթացում ներգրավված ստորաբաժանումների ներկայացրած տարեկան հաշվետվությունները ևս ենթակա են հրապարակման Կրթահամալիրի պաշտոնական կայքում:

3) Խմբային աշխատանքի խրախուսումը: Կրթահամալիրում գործող՝ մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը, մեխանիզմները հասանելի կլինեն Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապի ապահովմանը, որը հաստատությունում կստեղծի որակի ապահովման նկատմամբ գործընկերային և խմբային աշխատանքի մթնոլորտ:

4) Արժեհամակարգի ստեղծումը: Կրթահամալիրը համապատասխան միջոցառումներով և գործընթացներով կստեղծի մասնագիտական կրթության որակի ապահովման արժեհամակարգ և մշակույթ, որը հետևողականորեն կիրագործվի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում: Մասնագիտական կրթության որակի ապահովման բնագավառում Կրթահամալիրի գործունեության կոնկրետ նպատակներն

ու ուղղությունները (երկարաժամկետ և կարճաժամկետ) հաստատվում են գիտական խորհրդի կողմից և ամրագրվում Կրթահամալիրի ռազմավարության և զարգացման ծրագրերում:

5) Իրավական ապահովումը: Հայեցակարգի հիմնադրույթների իրացումն ապահովելու համար Կրթահամալիրն իրականացնում է այլ իրավական ակտերի և մեթոդական փաստաթղթերի մշակման և ընդունման աշխատանքներ:

4. Կրթահամալիրի առաքելությունը

1) Կրթահամալիրը բարձրագույն մասնագիտական իրավաբանական, ոստիկանական նախնական, միջին մասնագիտական, ինչպես նաև՝ լրացուցիչ կրթական ծրագրերով ուսուցում իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝

ա. իրավաբանական, ոստիկանական, պահնորդական, թիկնապահական կրթությամբ մասնագետների, ինչպես նաև՝ գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, իրավական մտքի և մասնագիտական հմտությունների ձևավորումը,

բ. ոստիկանության կրտսեր, միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստումը (մասնագիտական որակավորում),

գ. ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը,

դ. Կրթահամալիրի ներուժի զարգացման և կրթական (գիտական) գործունեության արդյունավետության ու որակի բարձրացման շնորհիվ շրջանավարտների մրցունակության բարձրացումը,

ե. կրթական և մասնագիտական հմտությունների ձևավորման համար ապագա գործատուների ներգրավումը կրթահամալիրի կրթական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում,

զ. նորագույն տեխնոլոգիաների օգտագործման միջոցով շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանն ուղղված տեղեկատվության փոխանցումը,

է. պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտելիքների և մանկավարժական հմտությունների շարունակական կատարելագործման ապահովումը՝ որպես առաջնային

և կենտրոնական բաղադրիչ, ինչպես նաև՝ ՀՀ կրթության համակարգի գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության ապահովումը՝ որպես Կրթահամալիրի հետազոտական հնարավորությունների զարգացմանն աջակցելու միջոց:

2) Կրթահամալիրում մասնագիտական կրթության որակի ապահովումն իրականացվում է պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի կողմից համապատասխան աշխատանքների պլանավորմամբ, կազմակերպմամբ և իրագործմամբ մշակված կրթության ***որակի*** համակարգային կառավարման ***քաղաքականության*** միջոցով:

3) Կրթահամալիրում համապատասխան ստորաբաժանումների կողմից, այլ ստորաբաժանումների օժանդակությամբ, կրթական գործունեության որակի ապահովման, հավաստման և մշտադիտարկման աշխատանքները կրում են համակարգված բնույթ: Այդ աշխատանքներին ներգրավված են նաև սովորողները, ինչպես նաև՝ արտաքին շահագրգիռ կողմերը (առաջին հերթին՝ գործատուները):

4) Մասնագիտական կրթության (այսուհետ՝ ՄԿ) որակի ապահովման, հավաստման և մշտադիտարկման բնագավառում Կրթահամալիրի գործունեության նպատակներն են՝

ա. ապահովել մասնագիտական կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանումը,

բ. խրախուսել և ապահովել հետազոտական դասավանդումն ու ուսուցումը,

գ. ապահովել կրթական վերջնարդյունքների արդիականացումը, զարգացնել մասնագիտական և փոխանցելի կարողություններ՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան,

դ. ապահովել շնորհվող որակավորումների համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին,

ե. ապահովել կրթական ծրագրերի գնահատման հավաստիությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը,

զ. բարելավել կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացները՝ խթանելով դասախոսների կողմից կրթական ծրագրերի գնահատումը փորձագիտական գնահատման և գործատուների հետադարձ կապի միջոցով,

է. բարձրացնել դասավանդման և ուսուցման որակը՝ դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործման, մանկավարժական նոր մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների ներմուծման ճանապարհով,

ը. որակյալ կրթական գործընթացի կազմակերպման համար ուսուցման արդյունավետ միջավայրի և ռեսուրսների ստեղծում,

թ. ապահովել շահառուների հետ հետադարձ կապը և արձագանքել վերջիններիս առաջարկություններին,

ժ. ապահովել հետազոտության միջոցով գիտելիքի զարգացումը և կիրառելիությունը,

ի. բարձրացնել Կրթահամալիրի՝ որպես մասնագիտական կրթության բարձր որակ ապահովող ուսումնական հաստատության գրավչությունը,

լ. բարձրացնել գործող և պոտենցիալ պրոֆեսորադասախոսական ու վարչական աշխատակազմի համար Կրթահամալիրի՝ որպես ուսումնական գործունեության կազմակերպման բարձր մակարդակ ապահովող աշխատավայրի գրավչությունը:

5) Կրթահամալիրն իր առաքելությունն իրականացնելու և տրամադրվող կրթական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակում և ներդնում է որակի ապահովման և մշտադիտարկման գործուն ընթացակարգեր:

5. Որակի ապահովման գործընթացները

1) ***Կրթության որակի ապահովումը*** ոչ միայն Կրթահամալիրի կողմից գիտելիքահենք հասարակության ստեղծման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման ***ռազմավարական նպատակ է***, այլև՝ ներքին և արտաքին ազդակների և մրցակցային դաշտի պայմաններում՝ ***ռազմավարական միջոց:***

2) Կրթության որակը տրամադրվող կրթական ծառայությունների համապատասխանությունն է բուհի առաքելությանը և որդեգրած ռազմավարական ծրագրին: Կրթահամալիրը կարևորում է այնպիսի կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների ստեղծումն ու տրամադրումը, որոնք կոչված են՝ բավարարելու միջազգային, ազգային և հանրային կարիքները՝ սոցիալ-տնտեսական պահանջների փոփոխությունների կանխատեսմամբ:

3) Որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում Որակի ապահովման չափորոշիչներն ու ուղենիշները և ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի <<Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին>> թիվ 959-Ն որոշումը:

4) Գործընթացները ներառում են՝

ա. որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի իրացում,

բ. կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում,

գ. մշտադիտարկում և կրթական ծրագրերի պարբերական վերանայում (ծրագրի մշակման արտոնում, ծրագրի իրականացման արտոնում, ծրագրի ընթացքի մշտադիտարկում, ծրագրի ամփոփիչ գնահատում և վերանայում),

դ. սովորողների գնահատում (ընթացիկ, միջանկյալ և եզրափակիչ գնահատման համակարգ),

ե. պրոֆեսորադասախոսական համակազմի որակի ապահովում (դասախոսների գործունեության արդյունավետության փորձագիտական գնահատում, գնահատում սովորողների կողմից, վարկանիշավորման և խրախուսման համակարգ),

զ. ուսումնական ռեսուրսների և աջակցություն ապահովում,

է. տեղեկատվական համակարգերի ներդրում,

ը. հանրային իրազեկվածության ապահովում:

6. Կրթահամալիրի շահառուները

1) Կրթահամալիրի շահառուներն են՝

ա. պետությունը,

բ. հասարակությունը,

գ. դիմորդներն (սովորողներ) ու վերջիներիս ծնողները,

դ. շրջանավարտները,

ե. անձնակազմը,

զ. գործընկերները,

է. ՀՀ ոստիկանությունը և այլ գործատուները:

7. Որակի ապահովման համակարգի ներբուհական սուբյեկտները

1) Որակի ապահովման մեխանիզմները ներդրվում և իրականացվում են կառավարման հետևյալ մակարդակներում՝ համակրթահամալիրային, գործառնական-կառուցվածքային և ֆակուլտետային (ամբիոնային): Յուրաքանչյուր մակարդակում գործում են կառավարման հետևյալ ձևերը՝ վարչական, մասնագիտացված գործառնական և մանկավարժական:

2) **Որակի ապահովման համակրթահամալիրային կառուցվածքի մեջ** ընդգրկվում են՝

ա. **Կրթահամալիրի պետը**. **վերահսկում է** որակի ապահովման համակրթահամալիրային քաղաքականության իրագործումը,

բ. **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողով.** պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգերի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, դրանք ապահովող փաստաթղթերի, կրթական ծրագրերի վերանայման և ներդրման քննարկման ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար,

գ. **Նպատակային ենթախմբեր.** անհրաժեշտության դեպքում ստեղծվում են գիտական խորհրդին **կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովում,** որոնք ուսումնասիրում և ներկայացնում են առաջարկություններ համապատասխան ոլորտի անհրաժեշտ ընթացակարգերի, կանոնակարգերի մշակման, վերանայման և կատարելագործման վերաբերյալ:

3) **Որակի ապահովման գործառական կառուցվածքում ընդգրկված են՝**

ա. **Կրթության որակի ապահովման բաժանմունք**. պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործման և մշտադիտարկման համար: Մշտադիտարկման արդյունքի հիման վրա ներկայացնում է առաջարկություններ որակի ապահովման գործընթացների բարելավման համար: Իրականացնում է Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումներից տվյալների, ինքնագնահատման հաշվետվությունների հավաքում և վերլուծություն, որը փոխանցում է գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովին: Բաժանմունքը համագործակցում է որակի ապահովման հանձնաժողովների և համապատասխան ստորաբաժանումների որակի ապահովման պատասխանատուների հետ:

4) **Ֆակուլտետային (ամբիոնային)** մակարդակով **որակի ապահովման համակարգն** ընդգրկում է՝

ա. Որակի ապահովման հանձնաժողովները. պատասխանատու են ուսուցման որակի և գործող ծրագրերի վերահսկման և մշտադիտարկման, նոր ուսումնական ծրագրերի

քննարկման, Կրթահամալիրի որդեգրած մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար: Որակի ապահովման հանձնաժողովները, ըստ անհրաժեշտության, քննարկում և առաջարկություններ են ներկայացնում համապատասխան ոլորտների անհրաժեշտ ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման ու բարելավման համար:

բ. **Որակի ապահովման պատասխանատու.** իրականացնում է համապատասխան ոլորտում որակի ապահովման և վերահսկման գործառույթներ, առաջարկություններ է ներկայացնում կազմակերպման ուսումնական ծրագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, համագործակցում է Կրթահամալիրի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ տվյալների հավաքման և փոխանցման նպատակով:

5) Բացի **վերոնշյալ սուբյեկտներից,** որակի ապահովման համակարգի կառավարման մեջ ներգրավված են ստորաբաժանումների այն բոլոր ղեկավարները, որոնք պատասխանատու են իրենց վերահսկման և կառավարման տիրույթում գտնվող գործունեության արդյունքների համար: Վերջիններս **կրթության որակի ապահովման բաժանմունքին** են տրամադրում իրենց ստորաբաժանմանն առնչվող տվյալները և հաշվետվությունները համապատասխան վերլուծություններ իրականացնելու նպատակով:

6) Կրթահամալիրի պետի տեղակալներն իրենց ենթակայության ուղղություններով պատասխանատվություն են կրում Կրթահամալիրում որակի ապահովման գործընթացի իրականացման համար:

8. Որակի ապահովման համակարգի ներբուհական սուբյեկտների լիազորությունները

1) **Կրթահամալիրի պետը՝**

ա. վերահսկում է Կրթահամալիրի շարունակական զարգացումը և որակի ապահովման ռազմավարական ուղեգիծը,

բ. վերահսկում է Կրթահամալիրում որակի ապահովման քաղաքականության, հայեցակարգի, ընթացակարգերի և գործընթացների մշակումը և դրանց շարունակական բարելավման աշխատանքները,

գ. վերահսկում է Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից որակի ապահովման գործընթացի իրականացումը,

դ. ստեղծում է որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքներում Կրթահամալիրի անձնակազմի և սովորողների ներգրավվածությունն ապահովող անհրաժեշտ պայմաններ:

2) **Ֆակուլտետի պետն իր լիազորությունների շրջանակներում՝**

ա. պատասխանատու է կրթական ծրագրերի մշակման և պատշաճ իրագործման համար,

բ. ապահովում է կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին,

գ. ապահովում է կրթական ծրագրերին առնչվող տեղեկատվության մատչելիությունը և հրապարակայնությունը,

դ. ամբիոնների պետերի հետ համատեղ մշակում է ֆակուլտետի զարգացման ռազմավարական կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր,

ե. ապահովում է կրթական ծրագրերի համապատասխանությունը ֆակուլտետի ռազմավարական ծրագրին,

զ. վերահսկում և համակարգում է ֆակուլտետի կողմից տրամադրվող ծառայությունների պատշաճ որակը,

է. համակարգում է ամբիոնի պետերի, կրթահամալիրի ղեկավարության և կրթության որակի ապահովման բաժանմունքի միջև կապը,

ը. որակի ապահովման ուղղությամբ համակարգում է ֆակուլտետի վարչական, գործառնական և այլ հատուկ աշխատանքները,

թ. կրթական ծրագրերի բարելավման նպատակով համագործակցում է այլ բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ,

ժ. կազմակերպում և ապահովում է Կրթահամալիրի այլ շահառուների հետ ֆակուլտետի անձնակազմի համագործակցությունը:

3) **Ամբիոնի պետը** հաշվետու է ֆակուլտետի պետին և **իր լիազորությունների շրջանակներում՝**

ա. ապահովում է ամբիոնի մասով կրթական ծրագրի իրականացումը,

բ. ապահովում է կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,

գ. ապահովում է կրթական ծրագրի վերջնարդյունքները և դրանց համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին և կրթական ծրագրի մասնագրին,

դ. մասնակցում է որակի ապահովման գործընթացներին սովորողների և դասախոսների կողմից կրթական ծրագրի մասնակցության, գնահատման համակարգի, դասավանդման և ուսուցման մեթոդաբանության, առկա ռեսուրսների, դասախոսական համակազմի պատրատվածության վերաբերյալ տեղեկատվության վերլուծության միջոցով,

ե. ապահովում է իր ղեկավարման ներքո գտնվող դասախոսների մասնագիտական աճը,

զ. միջնորդություն է ներկայացնում դասախոսների խրախուսման և առաջխաղացման վերաբերյալ,

է. ֆակուլտետի պետին է ներկայացնում կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած խնդիրները և լավագույն փորձը,

ը. մշակում և ֆակուլտետի պետին է ներկայացնում հիմնավորումներ և տեղեկատվություն նոր կրթական ծրագրի մշակման և իրագործման վերաբերյալ,

թ. ակտիվորեն մասնակցում է պարբերական և տարեկան մշտադիտարկումներին, կազմակերպում է կրթական ծրագրի ինքնագնահատման հաշվետվության պատրաստումը և կրթական ծրագրի արտաքին գնահատման աշխատանքները,

ժ. կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ դասախոսական անձնակազմի և սովորողների հետ՝ կրթական ծրագրին առնչվող խնդիրները քննարկելու և լուսաբանելու նպատակով,

ի. մշակում է դասալսումների ժամանակացույց և նշանակում պատախանատուներ, սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման, սովորողների հետ քննարկումների միջոցով կրթական ծրագրի մշտադիտարկումն ապահովելու նպատակով:

4) **Որակի ապահովման պատասխանատուն** հաշվետու է ֆակուլտետի (ամբիոնի) պետին և իրականացնում է որակի ապահովման անհրաժեշտ գործավարական ու գործառնական աշխատանքներ: Որակի ապահովման պատասխանատուն նշանակվում է կրթահամալիրի պետի հրամանով ֆակուլտետի (ամբիոնի) պետի ներկայացմամբ:

5) **Որակի ապահովման պատասխանատուն՝**

ա. տրամադրում է տեղեկատվական, մեթոդական, կազմակերպական օգնություն որակի բնագավառում աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, գնահատման, մշտադիտարկման, վերլուծության վերաբերյալ, այդ թվում՝ իրականացնում է հանձնարարված վերահսկման, կազմակերպական աշխատանքները,

բ. իրականացնում է շուկայավարական (մարքեթինգային) միջոցառումներ, պատասխանում բոլոր շահառուների հարցադրումներին,

գ. իրականացնում է տվյալ կրթական ծրագրով դասավանդող դասախոսական համակազմի գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և գրանցումը.

դ. իրականացնում է սովորողների վերաբերյալ տեղեկատվության գրանցումը՝ ներառյալ սովորողների առաջադիմությունը, շարժունությունը և այլն,

ե. գրանցում և ֆակուլտետի (ամբիոնի) պետին է ներկայացնում ուսումնական տարվա ընթացքում սովորողներից և դասախոսական կազմից հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը,

զ. կազմակերպում է կրթական ծրագրի արդյունավետության հետ կապված հետազոտություններ՝ արտաքին և ներքին շահառուների ներգրավմամբ,

է. ֆակուլտետի (ամբիոնի) պետի հետ մեկտեղ կազմակերպում և համակարգում է կրթական ծրագրի ինքնագնահատման աշխատանքները,

ը. ապահովում է առօրյա շփումը և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը կրթական ծրագրի շահառուներին:

6) **Կրթության որակի ապահովման բաժանմունքը հաշվետու է** Կրթահամալիրի պետին և իր լիազորությունների շրջանակներում՝

ա. իրականացնում է Կրթահամալիրում մասնագիտական կրթության որակի ապահովման պահանջների ձևակերպումը, մշակումը և ներդրումը,

բ. համակարգում է Կրթահամալիրում մասնագիտական կրթության որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործումը կառուցվածքային ստորաբաժանումների կողմից,

գ. կազմակերպում է Կրթահամալիրում մասնագիտական կրթության որակի ապահովման ընթացակարգերի կիրառման և իրագործման վերաբերյալ մշտադիտարկում,

դ. համագործակցում է Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների հետ և հետադարձ կապի միջոցով վերանայում և բարելավում է Կրթահամալիրում որակի ապահովման քաղաքականությունը, հայեցակարգը և ընթացակարգերը,

ե. կազմակերպում է սեմինարներ և վերապատրաստումներ՝ Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին իրազեկելով որակի ապահովման քաղաքականության, հայեցակարգի և ընթացակարգերի փոփոխությունների վերաբերյալ,

զ. իրականացնում է Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումներից կրթական ծառայությունների և գործընթացների կազմակերպման վերաբերյալ ստացած անհրաժեշտ տեղեկատվության քանակական և որակական վերլուծություններ,

է. վերլուծությունների հիման վրա ֆակուլտետային հանձնաժողովի հետ մշակում և **գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովին** է ներկայացնում համապատասխան առաջարկություններ,

ը. ներկայացնում է հաշվետվություն Կրթահամալիրի պետին որակի ապահովման համակարգի կենսագործունեության և այն կատարելագործելու վերաբերյալ,

թ. հետադարձ կապի միջոցով կազմակերպում է որակի ապահովման խմբի գործունեության արդյունավետության ինքնագնահատում, վերլուծում արդյունքները և բարելավում հետագա գործունեության գործընթացները,

ժ. կազմակերպում է որակի ապահովման համակրթահամալիրային ներքին փորձաքննություն և դրա արդյունքների հիման վրա որակը բարձրացնելու նպատակով ֆակուլտետային հանձնաժողովի հետ մշակում է միջոցառումների ծրագիր,

ի. կազմակերպում է որակի ապահովման խնդիրների վերաբերյալ այլ բուհերի հետ փորձի փոխանակում,

լ. հավաքում և ամփոփում է կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած ինքնագնահատման տարեկան հաշվետվությունները և ներկայացնում Կրթահամալիրի պետին:

7) **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովը** Կրթահամալիրում որակի ապահովման համակարգի խորհրդատվական կոլեգիալ մարմին է, որը գործում է՝ աջակցելու Կրթահամալիրի ղեկավարությանը, ինչպես նաև՝ գիտական խորհրդին որակի ապահովման հետ կապված խնդիրների լուծման համար: **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովը** ձևավորվում է գիտական խորհրդի որոշմամբ և նիստեր է գումարում տարեկան առնվազն մեկ անգամ:

8) **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովը՝**

ա. քննարկում է կրթական ծրագրի իրագործման կանոնակարգերը,

բ. իրականացնում է որակի ապահովման վերաբերյալ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների ուսումնասիրություն,

գ. ուսումնասիրում է Կրթահամալիրում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունները,

դ. ուսումնասիրում է Կրթահամալիրի որակի ապահովման խմբերի ներկայացրած ինքնագնահատման ամփոփ հաշվետվությունը,

ե. ուսումնասիրում է որակի ապահովմանն առնչվող առաջարկությունները և տալիս եզրակացություններ,

զ. հաշվետվություն է ներկայացնում Կրթահամալիրի գիտական խորհրդին և պետին:

9) **Ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովման հանձնաժողով:** Ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովման հանձնաժողովը հաշվետու է Կրթահամալիրի պետին և **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովին**:

10) Ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովման հանձնաժողովը՝

ա. իրականացնում է ֆակուլտետի (ամբիոնի) պլանային գնահատում և որակի պարբերական մշտադիտարկում,

բ. վեր է հանում ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովման հետ կապված թերությունները, դրանց պատճառները և ներկայացնում առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ,

գ. ներկայացնում է ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովման կատարելագործման վերաբերյալ առաջարկներ,

դ. մշակում է ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովման միջոցառումների ծրագիրը,

ե. իրականացնում է ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովմանն առնչվող հարցերի մշակում և նախնական քննարկում,

զ. ապահովում է ֆակուլտետի (ամբիոնի) որակի ապահովմանն առնչվող որոշումների իրականացման կազմակերպումը և վերահսկումը,

է. պատրաստում և **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովին** է ներկայացում իր կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության:

11) **Ուսանողական խորհրդի ներկայացուցիչը:** Յուրաքանչյուր ուսումնական տարի ֆակուլտետի սովորողներն ընտրում են մեկ սովորողի՝ իրենց տեսակետները ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովին ներկայացնելու համար, այդ թվում՝ տարբեր խնդիրների լուծմանը մասնակցելու նպատակով: Ֆակուլտետային հանձնաժողովի առաջարկությամբ երկու սովորող ընդգրկվում են **Կրթահամալիրի գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովում**: Յուրաքանչյուր տարի ընտրվում են տարբեր սովորողներ՝ հանձնաժողովներում ներգրավվելու նպատակով: